ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

ԼՐԱՏՈՒ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

No. 9 հուլիս 2014

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵԱՀԿ-ն հնարավորինս լայնորեն իրազեկել է հանրությանը սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի մասին: Գրասենյակն՝ ԱՄՆ ՄԶԳ-ի «Աջակցություն Ազգային Ժողովին» ծրագրի, Եվրոպական Միության պատվիրակության և GIZ-ի իր գործընկերների հետ միասին, կազմակերպեց մի շարք քննարկումներ հայեցակարգի նախագծի վերաբերյալ:

Մայիսին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ՝ կազմակերպվեցին երեք հանրային քննարկումներ, որոնց առանցքում մարդու իրավունքների, դատական համակարգի և իշխանության տարանջատման հարցերն էին: Առաջարկվող բարեփոխումների տարբերակները ներկայացնելու համար հրավիրվել էին Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամները, Սահմանադրական դատարանի նախագահը:

Հունիսին կազմակերպվեց ևս մեկ բանավեճ՝ խորհրդարանական հիմնական խմբակցությունների և արտախորհրդարանական ուժերի համար: Այս միջոցառումը նվիրված էր սահմանադրական բարեփոխումների, կառավարման համակարգի և ընտրական համակարգի բարեփոխման հիմնավորմանը և անհրաժեշտությանը:

Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխություն

Ս.թ. հունիսի 19-ին Երևանում ԵԱՀԿ-ն, ԱՄՆ դեսպանատունը, ԵՄ պատվիրակությունը, Բրիտանական դեսպանատունը, Եվրոպայի խորհուրդը, ՄԱԿ-ը և «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպությունը Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխության ժամանակ մեծարեցին այն անձանց, ովքեր աշխատում են Հայաստանում մարդու իրավունքների տարբեր ասպեկտները խթանելու ուղղությամբ: ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ Ուիլյամ Հանլոնը «Կառավարության բարեփոխիչ» մրցանակը հանձնեց ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դավիթ Տոնոյանին (նկարում)՝ զինված ուժերում մարդու իրավունքների խթանման ջանքերի համար: Մրցանակակիրների թվում էին նաև իրավաբաններ Արտակ Զեյնալյանը և Արա Ղազարյանը («Ազատության պաշտպան»), «Չենք վճարելու 150 դրամ» նախաձեռնությունը («Քաղաքացիական ակտիվություն»), Կանանց ռեսուրսային կենտրոնից Լարա Ահարոնյանը («Խիզախ կին»), «Հետք» լրատվամիջոցը («Մեդիա գերազանցություն»), Քարահունջի համայնքապետ Լուսինե Ավետյանը («Տեղական կառավարման բարեփոխիչ») և Մանկական վերականգնողական կենտրոնի տնօրեն Լաուրա Մովսիսյանը («Համայնքային ծառայություն»):

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Կարգավորիչ գիլյոտին. առաջնրթաց

Գրասենյակը շարունակում է բարեփոխման իր նախաձեռնությունը՝ «Կարգավորման արագ պարզեցում» (գիլյոտին) ծրագիրը: Այս ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանում օրենսդրական կարգավորումների էական կրճատմանը և պարզեցմանը՝ տնտեսական զարգացումը խթանելու, կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու և ընդհանուր կառավարման ավելի լավ համակարգ ապահովելու համար:

Ծրագրի առաջին փուլը հաջողությամբ ավարտվեց ս.թ ապրիլին, որի ընթացքում վերանայվել են տնտեսության ինն առանցքային ոլորտներ՝ ներառյալ հարկային, մաքսային, ձեռնարկատիրական, մշակութային, արտաքին գործերի, տրանսպորտի, առողջապահական և սոցիալական հարցեր, հանրային ծառայություններ: Ծրագիրը հանգեցրել է վերոհիշյալ ոլորտներում գործարարությամբ զբաղվելու ծախսերի մոտավորապես 60 տոկոսի կրճատման, ինչը կազմում է ավելի քան 25 միլիարդ ՀՀ դրամ՝ մոտավորապես 44 միլիոն եվրո: Այս բարեփոխումների լիարժեք իրականացման դեպքում Հայաստանի ՀՆԱ կարող է աճել մինչև 0.6 տոկոս: Այժմ մեկնարկել է երկրորդ փուլը՝ տնտեսության մնացած ութ ոլորտները վերանայելու ծրագրով:

Հունիսի 2-4-ը ԵԱՀԿ աջակցությամբ նախարարության քաղաքացիների և պետական գործակալությունների համար կազմակերպվեցին դասընթացներ, որոնց նպատակն էր խթանել Հայաստանի նախարարությունների ներգրավվածությունը «Կարգավորիչ գիլյոտին» ծրագրում: Մասնակիցները տեղեկացան ընթացիկ բարեփոխումների գործընթացի մասին և սովորեցին «գիլյոտինի» մեթոդաբանության մասին: Նրանք ուսումնասիրեցին նաև շուկայական միջավայրում կարգավորումների տարածված սխալները և կանոնակարգիչ խորհրդատվության լավագույն փորձը:

Կլիմայի փոփոխություն և անվտանգություն

Գրասենյակը կազմակերպեց ազգային խորհրդատվական աշխատաժողով «Շրջակա միջավայր և անվտանգություն» նախաձեռնության կողմից իրականացվող **«Կլիմայի փոփոխությունը և անվտանգությունը Արևելյան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում»** ծրագրի շրջանակում՝ Հայաստանում կլիմայի փոփոխության միտումների և ազդեցությունների վերջին վերլուծությունը ուսումնասիրելու համար: Կառավարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները քննարկեցին և վերանայեցին Հարավային Կովկասի երկրների համար պատրաստված կլիմայի փոփոխության հարցերի վերաբերյալ աշխատանքային փաստաթուղթը և ներկայացրեցին առաջարկություններ՝ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված անվտանգության հնարավոր ռիսկերը նվազեցնելու համար: Այդ քննարկումների արդյունքները կօգտագործվեն կլիմայի փոփոխության և անվտանգության վերաբերյալ զեկույցում, որն ավելի մանրամասն կքննարկվի տարածաշրջանային խորհրդատվական աշխատաժողովում՝ այս տարվա ընթացքում:

Շվեյցարական փորձի ուսումնասիրում

Ս.թ մարտի 31-ից ապրիլի 4-ը, ԵԱՀԿ աջակցությամբ, ՀՀ ոստիկանության պատվիրակությունը այցելեց Շվեյցարիա: Նրանք հանդիպեցին Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության (ԶՈՒԺՎ) Ժնևի կենտրոնի ղեկավար դեսպան Վինկլերի և նրա տեղակալ դոկտոր Ֆիլիպ Ֆլյուրիի հետ և քննարկեցին համագործակցության առաջնայնությունները: Պատվիրակությունը հանդիպեց նաև ԶՈՒԺՎ թրաֆիքինգի, միգրացիայի, ապաստանի և գենդերային հարցերով փորձագետներին, իսկ Էգլում այցելեցին Շաբլեի մունիցիպալ ոստիկանության բաժանմունք՝ շվեյցարական ոստիկանների առօրյա աշխատանքին ծանոթանալու նպատակով: Սավատանի ոստիկանական ակադեմիայում Հայաստանի ներկայացուցիչներին ծանոթացրեցին կրթական ծրագրերին և վերապատրաստման դասընթացներին: Այցի ընթացքում ստորագրվեց ՀՀ ոստիկանության և ԶՈՒԺՎ միջև համագործակցության ծրագիր, որով նախատեսվում է ԵԱՀԿ աջակցությամբ անցկացնել մի շարք միջոցառումներ՝ ուղղված ՀՀ ոստիկանության համակարգի զարգացմանը:

Հատուկ կարիքներով մարդիկ

Ապրիլի 30-ին ԵԱՀԿ-ի, Հայաստանում «Տեմպուս» ծրագրի ազգային գրասենյակի և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի կողմից կազմակերպվեց կլոր սեղան-քննարկում: Նպատակը Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների և մարտահրավերների հստակեցնում էր, ինչպես նաև բարձրագույն կրթության հասանելիության հարցը:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Դատավարությունների լուսաբանում

Փետրվարի 15-16-ը լրատվամիջոցների ներկայացուցիչների համար կազմակերպվեց երկօրյա վերապատրաստման դասընթաց՝ ՀՀ դատական դեպարտամենտի հետ միասին: Նպատակը մասնագիտական լուսաբանման միջոցով՝ Հայաստանում դատական համակարգի թափանցիկության խթանումն էր: Վերապատրաստման մոտ քսանհինգ մասնակիցներ վերլուծեցին դատավարությունների լուսաբանման առանձնահատկությունները, դատարանների աշխատանքը հանրությանը ավելի լավ ներկայացնելու ուղիները, դատական գործերի լուսաբանման հետ կապված մարտահրավերները և դատարանների նկատմամբ հանրության վստահության ամրապնդման մեթոդները:

Հանդուրժողականության խթանում

Կրոնի ազատության թեմայով վերապատրաստման դասընթացներ կազմակերպվեցին ապրիլին և մայիսին: Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ կազմակերպված առաջին դասընթացը նվիրված էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդվածներ 9-ին և 14-ին և համապատասխան նախադեպային իրավունքին: Հայաստանի օրենսդրության և դատական պրակտիկայի մասին ելույթներով հանդես եկան տեղի փորձագետները:

Երկօրյա վերապատրաստման երկրորդ դասընթացի թիրախային լսարանը լրագրողներ, փաստաբաններ և իրավապաշտպաններն էին, և այն անցկացվեց «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի հետ համագործակցությամբ՝ խոսքի ազատության և կրոնի կամ դավանանքի ազատության փոխհարաբերությունները քննարկելու համար: Միջոցառման նպատակն էր բարձրաձայնել Հայաստանում կրոնական հանդուրժողականության և կրոնի կամ դավանանքի ազատության իրավիճակի մասին, ինչպես նաև ամրապնդել դատարաններում, լրատվամիջոցներում և հասարակության շրջանում փաստաբանների և իրավապաշտպանների կրոնական հարցերի պաշտպանության և լուսաբանման կարողությունները:

Տեղեկատվական անվտանգության վերապատրաստում

Ս.թ հունիսի 9-20-ը ԵԱՀԿ կողմից կազմակերպվեցին վերապատրաստման երկու դասընթացներ՝ ոստիկանության և այլ համապատասխան մարմինների կողմից կիբերհանցագործությունների հետաքննության և պայքարի կարողությունները բարձրացնելու նպատակով: ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության և անվտանգության ոլորտի այլ մարմինների տարբեր վարչությունների շուրջ 25 ներկայացուցիչներ մասնակցեցին վերապատրաստման դասընթացին, որը վարում էր փորձագետ՝ Միացյալ Նահանգներից: Դասընթացում ընդգրկված էին թե տեղեկատվական անվտանգության հիմունքները և թե կիբերհարձակումների քննության և արձագանքման առաջատար մոտեցումները: Մասնակիցները ձեռք բերեցին անվտանգության արդյունավետ իրականացման, ինչպես նաև կիբեր-միջադեպերը վերլուծելու և սպառնալիքներին արձագանքելու համար անհրաժեշտ տեխնիկական հմտություններ:

Դատախաղ - մրցույթ

Իջևանի ավագ դպրոցի սաները մասնակցեցին նմանակման դատախաղին, որը կազմակերպել էր գրասենյակը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի և «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Վարժությունը բարձրացրեց Հայաստանի մարզերի ավագ դպրոցների սաների շրջանում համապատասխան օրենսդրության և նախադեպային իրավունքի մասին իրազեկվածությունը: Աշակերտների մի խումբը հանդես եկավ որպես քրեական գործի դատավարության պաշտպանության, իսկ մյուս խումբը՝ որպես մեղադրող կողմ: Սցենարը մշակել էին ՀԿ-ի փորձագետները՝ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման հիման վրա: Մրցույթին հետևեց վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վերաբերյալ քննարկումը ուսանողների և դատավորների միջև:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ/ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ուղեցույց

Հայաստանի հյուպատոսական ծառայության աշխատակիցների համար նախատեսված ձեռնարկը պատրաստվել է ԵԱՀԿ թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի աշխատակիցների կողմից՝ օգնելու բացահայտել թրաֆիքինգի հնարավոր դեպքերը և իրականացնել զոհերի նախնական նույնացում:

Հաղորդակցություն և բանակցություն

ԵԱՀԿ-ն աջակցեց «Հաղորդակցություն և բանակցություն» գրքույկի մշակմանը և հրատարակմանը, որն օգտագործվեց 140 համայնքային ոստիկանների վերապատրաստման դասընթացի ժամանակ:

Հանրային շահ ներկայացնող գործերի դատավարություն

Մարտի 24-ին գրասենյակը կազմակերպեց աշխատաժողով՝ քննարկելու հանրային շահի պաշտպանության համար ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության՝ դատարաններ դիմելու իրավունքի ազգային և միջազգային չափանիշները: Միջոցառումն ավարտվեց համապատասխան օրենսդրությունը ուսումնասիրելու և լրամշակումների համար հիմք հանդիսացող հնարավոր մոդել ներկայացնելու քաղաքացիական հասարակության նախաձեռնությամբ, որին իրենց աջակցությունը հայտնեցին ՀՀ արդարադատության նախարարությունը և Դատական դեպարտամենտը:

Ֆոտո ցուցահանդես

Մամուլի ազատության միջազգային օրը նշելու առթիվ ս.թ մայիսի 5-ին բացվեց **«Մամուլի ազատություն. տեղեկատվություն ստանալու իրավունք»** թեմայով ցուցահանդեսը: Արդեն չորրորդ տարին է՝

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կազմակերպում է նման ցուցահանդեսներ՝ համագործակցելով Հայաստանում ԵՄ պատվիրակության և ԵԱՀԿ գրասենյակի հետ: Ցուցահանդեսն արծարծեց տեղեկատվության իրավունքի իրացման մարտահրավերները և հնարավորությունները: Ցուցահանդեսում ներկայացված ավելի քան 70 լուսանկարները և ծաղրանկարները կհրատարակվեն Մամուլի ազատության միջազգային օրվան նվիրված հատուկ ժողովածուում:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) գործում է հանուն իր 57 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին Հայաստանին՝ ԵԱՀԿ առջև անվտանգության բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական ու բնապահպանական և մարդու իրավունքներ, ստանձնած իր պարտավորությունների կատարմանը օժանդակելու համար:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ Սունդուկյան 64/1, հեռ.. (00 374 10) 229610/11/12
էլ.փոստ՝ yerevan-am@osce.org, կայքէջ՝ http://www.osce.org/yerevan